ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՍԿՍԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

13. 03. 2025թ.

ՎՁՄ Եղեգիս համայնք

Ժողովի մասնակիցներ՝

1. Ահարոն Գաբրիելյան- հանձնաժողովի նախագահ
2. Սամվել Մարտիրոսյան- հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Աննա Դանիելյան- հանձնաժողովի քարտուղար
4. Մուրադ Օհանյան- հանձնաժողովի անդամ
5. Նարեկ Մարտիրոսյան- հանձնաժողովի անդամ
6. Հունան Ստեփանյան- հանձնաժողովի անդամ
7. Սիլվա Խորենյան- հանձնաժողովի անդամ
8. Գարեգին Եղյան- հանձնաժողովի անդամ
9. Ռուբեն Հովհաննիսյան- հանձնաժողովի անդամ

Օրակարգ՝

Եղեգիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում չափորոշիչներին համապատասխանող առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

1. Հանձնաժողովի նախագահ Ահարոն Գաբրիելյանին

Նա արձանագրեց մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն առաջարկների քվեարկության ավարտը:

2. Հանձնաժողովի քարտուղար Աննա Դանիելյանին

Նա ներկայացրեց քվեարկության դրված ծրագրերի հավաքած միավորները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

- Մարզադաշտի բարեկարգում Աղնջաձոր գյուղում-374 ձայն
- «Երջանիկ մանուկ» խաղահրապարակի կառուցում-334 ձայն
- «Եղեգիս համայնքի տուրիստական և մշակութային զարգացման ծրագիր»-88 ձայն

- Շարժական սպանդանոցի ստեղծում-33 ձայն
- Երիտասարդական կենտրոնի հիմնում Հերմոն գյուղում-6 ձայն:

Համաձայն Մասնակցային բյուջետավորում ծրագրի կարգի 13-րդ կետի և մեթոդական ուղեցույցի քվեարկության սահմանված շեմը՝ համայնքի քվեարկության իրավունք ունեցող բնակիչների ձայների առնվազն մեկ տոկոսը, հաղթահարել են երեք առաջարկներ՝

- ✓ Մարզադաշտի բարեկարգում Աղնջաձոր գյուղում-374 ձայն
- ✓ «Երջանիկ մանուկ» խաղահրապարակի կառուցում-334 ձայն
- ✓ «Եղեգիս համայնքի տուրիստական և մշակութային զարգացման ծրագիր»-88 ձայն

Հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 2023թ. նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված ՀՀ համայնքներում մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգի 14-րդ կետի համաձայն քվեարկության շեմը հաղթահարած 2 առաջարկ-նախագծի հիման վրա մշակել մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված ծրագիր և կազմել սուբվենցիայի հայտ, որը ըստ սահմանված ժամանակացույցի պետք է ներկայացնել լիազոր մարմին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ահարոն Գաբրիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Աննա Դանիելյան

Ժողովի մասնակիցներ՝ _____ Սամվել Մարտիրոսյան

_____ Մուրադ Օհանյան

_____ Նարեկ Մարտիրոսյան

_____ Հունան Ստեփանյան

_____ Սիլվա Խորենյան

_____ Գարեգին Եղյան

_____ Ռուբեն Հովհաննիսյան